

Փոքրիկ Բուն

Լենե Մաեեր-Սկումանց / Սալվատորե Սցիասցիա
Թարթմանիչ. Շուշանիկ Սաֆարյան



Շատ ժամանակ առաջ, երբ մարդիկ և կենդանիները նույն լեզվով էին խոսում, փոքրիկ Բուն ապրում էր անտառում՝ Երազանքների լեռների ետևում: Նա վեց եղբայրներից և քույրերից կրտսերն էր և վերջինն էր, ով պիտի լքեր հին ծառի փչակի բույնը: Ծնողները նրան սովորեցրեցին թռչել, մուկ բռնել և արևալուզանք ընդունել, ապա ասացին.

- Քա՛ջ եղի՛ր, Փոքրի՛կ Բու: Գնա՛, տե՛ս աշխարհը:
- Բայց մի՞ թե ես փոքր չեմ, - հարցրեց փոքրիկ Բուն:

Բուի ծնողները snap together կտուցները և խոնարհ շնջացին.«Մեծ Բուն - Ամենայն Արարիչը քեզ հետ է, նա կհետևի քեզ քո ճանապարհին: Դու գիտես մեր օրենքները. արագ սպանիր որսացուիդ, որպեսզի ցավ չպատճառես:», այդպես նաև համեղ կլինի կերակուրդ: Վայելի՛ր արևի ամեն շողը, որքան էլ մեղմ լինի այն: Քանզի երկար թռչելը դիմացկուն կդարձնի քեզ... թռիչքում սովորիր թռչել: Այսքանը»:

Փոքրիկ Բուն շրջվեց, որպեսզի վերջին անգամ տեսնի ծնողներին և ծառը, որն իր սունն էր: Նա ծվծվաց, գոչեց և բվվաց հաջողություն: Ապա բացեց թևերը և թռչեց հեռու:

Երազանքների լեռների ետևի անտառը մեծ էր ու լի կենդանիներով: Որոշ ժամանակ թռչելուց հետո Բուն հանդիպեց մի բացատ քարքարոտ բլրի վրա: Նա թառեց դրա գագաթին, թարթեց աչքերը մայր մտնող արևի շողերի առաջ և երջանկությամբ լիացավ: Ներքևում՝ մի քարի վրա, որ դեռ տաք էր արևի շողերից, պառկած էր մի վայրի կատու: Չորս սև բեղ ձգվում էին նրա քթից դեպի ճակատը: Նրա փմփուշ գանգուր պոչը թեթև ցնցվեց, երբ նա բարձրացրեց գլուխը և հայացքն ուղղեց դեպի Փոքրիկ Բուն.

- Ո՛վ Բու: Դու ճիշտ ժամանակին ես եկել: Խնդրում եմ պատասխանի՛ր ինձ, ինչպե՞ս Մեծ Կատուն - Ամենայն Արարիչը, թույլ է տալիս, որ կատուները հնազանդվեն և ընտելացվեն:
- Ի՞նչ, - զարմանքով գոչեց Բուն:
- Երեկ երեկոյան ես գնացի ավելի հեռու քան երբևե գնացել էի, դեպի այն ջրվեժը, որ աղմկելով հոսում է Երազանքի լեռների վրայով: Այնտեղ ես

տեսա մի շինություն, որ փայտից և քարից կառուցել էին մարդիկ, շրթակայքում տարածված էր չաղիկ կշկչացող թռչունների գրավիչ բույրը: Ես կուշտ էի և միայն հեռվից ցանկացա դիտել: Շինության առաջ մի մարդ էր նստած՝ մի կատու ծնկներին, և նա շոյում էր նրան: Կատուն չէր կծում կամ ճանկոտում, փոխարենը նա մոմոում էր: Ես սարսռացի: Ինչպե՞ս կարելի է թույլ տալ մեկին դիպչել քեզ: Մոռոռ:

Փոքրիկ Բուն նայեց ներքև, շարժեց գլուխը և ծվծվաց.

- Ինչպե՞ս կարող եմ ես իմանալ:

Վայրի կատուն վեր կացավ, նրա գանգուր պոչը փքվեց... Նրա աչքերը կանաչեցին, ապա դեղնացան...

- Ի՞նչ նկատի ունես, - ֆշշաց նա, - Դու Բու՛ ես: Բուերը իմաստուն են և գիտեն աշխարհի բոլոր հարցերի պատասխանները:

- Ես դա չգիտեի, - ապշած պատասխանեց Փոքրիկ Բուն:

- Այդ դեպքում դու ինչ ի համար գոյություն ունես, - վիճեց Վայրի Կատուն, - ամաչի՛ր:

Փոքրիկ Բուն այնքան շփոթված էր, որ բացեց թևերը և թռչեց հեռու: Նա տեսավ մի ծառ՝ հարմարավետ փչակով և լայն գագաթով, որ փայլում էր վերջալույսի շողերում: Փոքրիկ Բուն նստեց ամենացածր ճյուղի վրա և սկսեց խորհել: Ներքևից եկավ ծանր թևերի խշխշոց: Ինչ-որ բան աղմկոտ շաչեց և հանկարծակի մի սիրամարգ վայր ընկավ Փոքրիկ Բուի կողքին: Ճյուղը նրա տակ ճոճվեց:

- Կրկին հաջողեցի: - մոթմոթաց սիրամարգը, - Ամեն երեկո նույնը մինչև քուն մտնելը: Ինչու՞ ես չեմ կարողանում թռչել այնպես, ինչպես վազում եմ: Հէ՛յ, այդ ո՞վ է այդտեղ կուչ եկել: Փոքրի՛կ, լսի՛ր, սա իմ ծառն է, որտեղ ես քնում եմ:

- Ներեցեք, - մրմնջաց Փոքրիկ Բուն:

Սիրամարգը թափահարեց իր չքնաղ փետուրները և ասաց.

- Օ՛, Բու... Այսպես հարմար է, - նա կախեց իր փետուրները և տեղավորեց դրանք:

Ապա նա շարունակեց.

- Ես մի հարց ունեմ, որ ինձ հանգիստ չի տալիս: Ինչու՞ Մեծ Սիրամարգը - Ամենայն Արարիչը, այսքան քիչ ծառեր է ստեղծել, որտեղ մենք կարող ենք քնել:

- Ի՞նչ, ի՞նչ – կոնչաց Փոքրիկ Բուն:

- Տեսնու՞մ ես, թե՛ ես ինչ երկար պոչ ունեմ, - ասաց Սիրամարգը, - դրա շնորհիվ ես ի գորու եմ հմայել յուրաքանչյուրի: Բայց երբ ես կարիք ունեմ ապահով հանգիստ քնի, այն ինձ խանգարում է: Միայն շատ բարձր ծառերը, բարձ հորիզոնական ճյուղերով կարող են օթևան լինել ինձ: Այս անտառում դրանք շատ չեն:

- Դու այս մեկն ունես, - շնջաց Փոքրիկ Բուն:

- Ես կամենու՞մ եմ ունենալ երեքը, չորսը, որ կարողանամ ընտրել, - բղավեց սիրամարգը, - պատասխա՛ն տուր ինձ, ինչ՞ու դրանք բավական շատ չեն:

- Ես չգիտեմ, - պատասխանեց Փոքրիկ Բուն:

Սիրամարգը իջեցրեց գլուխը, այնպես որ նրա կապույտ փետուրների ծայրերը քիչ մնար դիպչելին Փոքրիկ Բուի փետուրներին:

- Դու չգիտե՞ս... Ինչպե՞ս, թե չգիտես: Բուերը գիտեն աշխարհի բոլոր հարցերի պատասխանները:

- Ես չգիտեի, որ դա կարևոր հարց է, - խոստովանեց Փոքրիկ Բուն:
- Այ դու, փոքրիկ հիմար: Ուրեմն դու իսկական բու չե՛ս, - կարկաչեց Սիրամարգը,- դու պետք է ամաչես:

Փոքրիկ Բուն հեռացավ՝ բոլորովին շփոթված:

Նա գտավ մի ժայռ, որի ներսում փոքրիկ քարայր կար, և նստեց խորշում, որպեսզի մի փոքր հանգստանա և մտածի: «Ինչու՞ ես պետք է ինքս ինձանից ամաչեմ», մտածեց նա, «Ինչու՞ ես պետք է իմանամ աշխարհի բոլոր հարցերի պատասխանները: Ինչպես կարող են Վայրի Կատուն և Սիրամարգը խոսել Մեծ Վայրի Կատու – Ամենայն Արարչի և Մեծ Սիրամարգ – Ամենայն Արարչի մասին, երբ կա մեկ Ամենայն Արարիչ - Մեծ Բուն»:

Արևը մայր մտավ Երազանքի լեռների ետևում: Արևմուտքում շողաց գիշերվա աստղը և ծառերի գագաթների վերևում դանդաղ բարձրացավ Լուսինը: Դրա շողերը դիպան ժայռի ներսում գտնվող քարայրին և Բուն արձաթե լույսի գրկում երջանկություն զգաց:

- Թոչեղու ժամանակն է, - ծվծվաց մի ձայն ետևում, - Մեղմ գիշեր է: Փա՛ռք Մեծ Չղջիկին - Ամենայն Արարչին:

Փոքրիկ Բուն շրջվեց և տեսավ պատից գլխիվայր կախված չիջիկին: Ճանկերով նա ամրացել էր ժայռին: Նա մի փոքր բացել էր թևերն, որպեսզի յուղապատի դրանք: Լեզվով նա իր ողջ մաշկը պատում էր մի յուղային քսուկով, որ դուրս էր գալիս իր քթանցքների վերևի անցքից: Փոքրիկ Բուն զզվանքով բացականչեց.

- Սա ի՛նչ գարշահոտ է:
- Բույրը չափազանց ուժեղ է, - համաձայնեց Չղջիկը, - այ թե ինչու ես քեզ համար լավ որս չեմ, բարեկա՛մա: Դու Բու ես, այնպես չե՛ :
- Այո՛, բայց ես փոքր եմ և գուցե իսկական բու էլ չեմ...
- Այդ ինչպե՞ս: Բուն Բու է, և բուերը գիտեն աշխարհի բոլոր հարցերի պատասխանները,- ասաց Չղջիկը, - ես քեզ մի հարց ունեմ:

Ապա Չղջիկը իջավ խորշի եզրից և կախվեց Փոքրիկ Բուի առաջ:

- Տե՛ս, թե որքան իմաստուն է գտնվել Արարիչը ինձ ստեղծելիս, - ասաց նա, - ես օժտված եմ բոլոր հնարքներով՝ կարող եմ գտնել միջատներ անգամ մութ գիշերում, ես բացականչում եմ և երբ ի պատասխան հնչում է արձագանք, ես հարձակվում և որսում եմ դրանց: Այնուամենայնիվ, ինձ հուզում է մի հարց, թե ինչու ես միայն մի ձագ կարող եմ ունենալ տարվա ընթացքում:

Թիթեռներն ու ուտիճները կարող են շատ. շատ ձու դնել, մի խումբ ձագուկ ոգնիներ վազվզում են մայրիկ ոգնու շուրջ, իսկ աղվեսները առնվազն երեք ձագ կարող են ունենալ: Ասա՛,թե ինչ՞ ու Մեծ Չղջիկը՝ Ամենայն Արարիչը, թույլ է տալիս ինձ միայն մեկ ձագ ունենալ:

- Ես չգիտեմ, - պատասխանեց Փոքրիկ Բուն:

Չղջիկը ապշաց ցնցվեց:

- Դու չգիտե՞ս: Ինչու՞ ես պետք է հավատամ քեզ:
- Չգիտեմ, - կրկնեց Փոքրիկ Բուն և թախծորեն ախ քաշեց:
- Ո՞վ կարող է իմանալ, եթե դու չգիտես, - տխրեց Չղջիկը, - գուցե դու բավականին ջանք չես գործադրում: Այնպես չե՛ : Վերադաձի՛ր խնդրում եմ, երբ կարողանաս հիշել պատասխանը:

Փոքրիկ Բուն ոգևորված գլխով արեց:

- Շատ լավ, - ծվծվաց Չիչիկը:

Նա բացեց թևերը և ճախրեց մութ գիշերվա գիրկը: Նա ձայն արձակեց, որ տարածվեց օդում: Մյուս չիչիկները հետևեցին իրեն քարայրի խոր թաքստոցներից: Փոքրիկ Բուն դիտում էր, թե ինչպես նրանք լուսնալույսի ներքո կեռագծով թռչեցին հեռու:

Չնայած այդքան մտատանջություններին՝ Փոքրիկ Բուն զգաց, որ բավականին քաղցած էր: Նա գիշերն անցկացրեց որս անելով, նա կայծակի արագությամբ մեկը մյուսի ետևից բռնում էր մկների: Երբ նա արդեն այնքան կուշտ էր, որ այլևս պատահանգամ կոկորդը չէր գնա, նա ասաց մկանը, որ լսում է նրա ծվծվոցը հողում:

- Մու՛կ, պատասխանի՛ր, ո՞վ է արարել ինձ և քեզ:

Քիչ անց հողի տակից ծվծվոց եկավ:

- Մեծ Մուկը, էլ ո՞վ պետք է լինի: Վստահ եմ, դու ինքդ ել գիտես, դուք ամեն ինչ գիտեք: Ինչ՞ու ես խորամանկ հարցեր տալիս: Ուզու՞մ ես դուրս հանել ինձ իմ բնից: Ամեն անգամ, երբ մեզնից մեկն անհետանում է, մեղքը ձեր ցեղինն է: Ա՛խ, եթե ես միայն իմանայի, թե ինչու դուք՝ բուերդ, խոտակեր չեք:

- Կամ գուցե ցորենակեր, - հառաչեց Փոքրիկ Բուն:

- Օ, ո՛չ, ցորենը մեր կերակուրն է, - մեղմորեն ծվծվաց Մուկը:

Ապա ամեն բան խաղաղվեց:

Փոքրիկ Բուն թռչում էր և փնտրում մի բարձր ծառի կատար, որտեղ նա կկարողանար հանգստանալ: «Հուուու, ուուու, հուու, ոուու, ես չգիտեմ ամեն բան», - գոչում էր նա: «Ես միայն գիտեմ, որ չգիտեմ ամեն բան»: Ներքևում սահեց մի գորշ ստվեր՝ թմբլիկ գանգուր պոչով: «Մի նշույլ գիտելիք արդեն նշմարվում է, թեև նույքան սակավ, որքան մորուքի վարսիկը»: Փոքրիկ Բուն շրվեց, շուրջ բուրբը նայեց և ծվծվաց. «Ես կսովորեմ» ու քուն մտավ:

Երբ վաղորդյան արեգակը փայլեց տերևների միջով, Փոքրիկ Բուն արդեն արթուն էր և վայելում էր կարմրավուն ցուլքերը: “Ի՞նչի կհանդիպեմ ես այսօր: Ինչի՞ միջով կանցնեմ:”, - հարցրեց նա ինքն իրեն: Նա բաց արեց թևերն ու լռելյայն թռչեց հեռու՝ արթնացող անտառի վրայով դեպի Երազանքի լեռները: Ներքևում նա տեսավ գետի հոսանքը, որ փրփրում և փայլում էր շողերում: Նա ցաց թռչեց և նկատեց մի տուն, որ կառուցել էին մարդիկ, այն մեկը, որի մասին պատմում էր Վայրի Կատուն: Այն խաղաղ էր, միայն մի քանի հավ փնտրում էին դալարուկներ: Հեռվում՝ գետակի ներքևում, մի մարդ երգ էր հյուսում: Փոքրիկ Բուն թռչեց դեպի ձայնի կանչը և տեսավ մի կին, ով ջուր էր լցնում :

Բուն թառեց մի բալենու ճյուղի և հառաչեց.

- Դու գեղեցիկ ձայն ունես, շատ ավելի գեղեցիկ, քան իմն է:

Կինը վեր նայեց և ժպտաց: Ապա նա խոսեց.

- Պատկերացրու բնության շտեմարանում ամեն բան միանման լինելը: Չե՞ս կարծում, որ աշխարհը ձանձրալի կլիներ: Օրինակ, դու կարողես տեսնել և լսել ինձնից շատ ավելի լավ, բացի թռչել կարողանալուց, որ ես չեմ կարող:

- Իսկ ինչու՞ ես դու երգում, - հարցրեց Փոքրիկ Բուն, - դու ցանկանում ես պաշտպանել քո արգավանդ հողը, ինչպես կեռեխն է անում:
- Ես երգում եմ, որպեսզի աշխատանքը հաճելի լինի, - ասաց կինը, - բայց երբեմն ես երգում եմ ի փառք Մեծ Մայրիկի - Ամենայն Արարչի:
- Իսկ նա որտե՞ղ է ապրում, - հարցրեց Փոքրիկ Բուն:
- Ամենուր, - պատասխանեց Կինը, - մարդկային աչքը ի գորու չէ իրեն տեսնել: Արեգակը, Լուսինը և աստղերը իր հագուստի զարդերն են...
- Իսկ եթե ես ասեմ, - շնջաց Փոքրիկ Բուն, - թե ձուկն այս գետակում ճանաչում է միայն Մեծ Ձկանը որպես Ամենայն Արարչի:
- Մեծ Մայրիկը չի բարկանա, - ասաց Կինը, - նա սիրում է իր բոլոր արարածների:

Փոքրիկ Բուն գլուխն այս և այն կողմ արեց և մտածեց.

- Նա գոհանու՞մ է, երբ դու երգում ես ի փառ իրեն:
 - Հուսով եմ, - ասաց Կինը, - ես իրեն դիմում եմ իմ բոլոր խնդրանքներով – որպեսզի իմ տան կտուրը երկար տարիներ ամուր լինի, իմ հավերքը բազմաթիվ ճուտեր ունենան, իսկ ես և զավակս առողջ լինենք...
 - Դու հոգու՞մ ես այն բաների համար, որ կպատահեն վաղը:
 - Ինչպես բոլորը, - ասաց Կինը, - արդյո՞ք այսօր անձրև կլինի: Ես ուզում եմ իմ լվացքը չորանա:
 - Կարծես, օդում անձրևի բույր չի զգացվում, - ասաց Փոքրիկ Բուն:
- Հեռանալուց առաջ նա հառաչ արձակեց և թռչեց հոսանքն ի վեր:

Ողջ օրն արևը շողշողում էր, և Փոքրիկ Բուն մի քանի անգամ գոհացավ արևի լոգանքից: Այդժամ նրա միտքը լուսավոր էր, և նա կարողանում էր պարզ մտածել: Երեկոյան նա թռչեց դեպի Երազանքի լեռների լանջերը: Գիշերվա գալուստին նա նկատեց ինչ-որ բան, որ փայլում էր ծառերի արանքում՝ կարծես մի ոսկե աստղ: Նա թռչեց դեպի շողքը և հայտնաբերեց մի փոքրիկ փայտյա խրճիթ: Լույսը շողում էր պատի արանքից և գրավում ուտիճներին: Փոքրիկ Բուն նույնպես կախարդված էր լույսով: Նա զգուշորեն մոտենում էր ավելի ու ավելի մինչև չհայտնվեց արանքի առջև՝ փոքրիկ աստիճանին նստած: Նրան այնքան հաճելի էր ջերմ շողքը, որ ակամայից նա սկսեց երգել բուերի սիրո երգը: Նա հառաչում էր և ծվվում և բվվում: “Մի բու իմ պատուհանի շեմքին”, ասում էր ցածր ձայնը: “Բարի գալու՛ստ”: Փոքրիկ Բուն թարթեց աչքերը, որպեսզի կարողանա տեսնել մարդուն լույսի մյուս կողմում: Դա մի ծերունի էր:

Փոքրիկ Բուն հարցրեց Ծերունուն.

- Ի՞նչ էք անում այստեղ:
- Կարդում եմ, - ասաց նա և մեղմորեն քշեց ուտիճին թերթի վրայից, - օրը չափազանց կարճ էր, այդ պատճառով ես շարունակում եմ կարդալ ջահի լույսի ներքո: Մա մի գիրք է Մեծ Հայրիկի - Ամենայն Արարչի մասին:
- Իսկ նա որտե՞ղ է ապրում, - հարցրեց Փոքր Բուն:
- Ամենուրեք, - պատասխանեց Ծերունին, - դրախտավայրում, որ իմ աչերը դեռ ունակ չեն տեսնելու, նաև մարդկանց սրտերում:
- Դուք նրան հարցնու՞մ էք վաղվա մասին, - հարցրեց Փոքր Բուն:

- Այո՛, իհարկե,- պատասխանեց Ծերունին,- բայց ավելի հաճախ ես իրեն հարցնում եմ անցյալի մասին: Իմ կյանքում այբան բաներ են պատահել, որ չէին կարող խուսափել իր ամենատես աչքից: Դա ինձ շատ է հուզում:
- Եթե միայն ես Ձեզ ասեի,- շնջաց Փոքրիկ Բուն,- որ ուտիճը ճանաչում է միայն Մեծ Ուտիճ որպես Ամենայն Արարիչ...

Ծերունին խղճահարությամբ ժպտաց.

- Ինչպե՞ս կարող է նա այլ կերպ պատկերացնել Մեծ Հայրիկին:
- Գուցե ինչպես Մեծ Մայրիկի՞, ինչպես Կինը գետակի մոտ:

Ծերունին խոժոռվեց:

- Ես իրեն ասել եմ Մեծ Հայրիկի մասին, բայց քո ասածից հետևում է, որ ապարդյուն: Հուսով եմ, մի օր նա կհասկանա, որն է ճշմարիտը:
- Մեծ Հայրիկը վիրավորվու՞մ է, երբ Կինը նրան Մեծ Մայրիկ է անվանում,- հարցրեց Փոքրիկ Բուն:

Ծերունին երկար խորհեց.

- Հետաքրքիր հարց է... Չեմ կարծում: Մեծ Հայրիկը բարեսիրտ է: Ավաղ, դա ինձ է վիրավորում, իր խոնարհ ծառային:

- Թույլ մի՛ տվեք դրան հուսահատեցնել Ձեզ,- ասաց Փոքրիկ Բուն:

Նա բվվաց հաջողություն և հեռացավ:

Հաջորդ առավոտյան Փոքրիկ Բուն վերադարձավ գետակ: Այս անգամ նա չտեսավ կնոջը, փոխարենը նա հանդիպեց մի երեխայի: Երեխան նստած էր գետափին՝ գրկում կատու, ոտքերը գետակի հոսոխ ջրերում: Նա նայում էր ձկներին: Արևի շողերում փայփլում էին երեխան, կատուն, հոսանքները, քարերն ու դալար խոտը: Փոքրիկ Բուն դանդաղ վայրէջքի եկավ մի ծառի կոճղի: Իր սուր աչքը ի գորու էր տեսնել ամեն ինչ նույնիսկ մեծ հեռավորության վրա: Նա դիտում էր, թե ինչպես է երեխան շոյում կատվին, իսկ կատուն վայելում հաճույքը՝ մոռանալով անգամ ձկներին: Ինչպե՞ս էին փայփլում կատվի բեղուկները... Ամենն իրեն հաճույք էր պատճառում:

Հետաքրքիր է, արդյո՞ք Երեխան նույնպես իր անունն է տվել այն հիասքանչ Արարչին, ով ստեղծել է ամենը և թույլ է տալիս, որ Արևը շողշողա: Գուցե և Երեխան անունը չգիտի, բայց նա նստած է Իր ներկայությամբ: Փոքրիկ Բուն դա միանշանակ զգում էր: Վաղը և հաջորդ օրը դեռ ապագայում էին և կարևոր չէին: Երեկվա օրը և նախորդը արդեն ետևում էին, անցյալի անկյուններում, դրանք արդեն էական չէին: Փոքրիկ Բուն շուրջ բոլորը պտտեց հայացքը և մտաբերեց բոլոր անունները, որ կնքել էին հիասքանչ Արարչի.

- Նրան կարող էին նույնիսկ կոչել Մեծ Գաղտնիք – Ամենուրեք Ներկա,- բվվաց Փոքրիկ Բուն:
- Իսկ ինչու ոչ,- մի աչքը բաց արեց և ծուլորեն մլավեց Կատուն:

Մայրամուտին Փոքրիկ Բուն վերադարձավ անտառ: Նա փնտրում էր մկան բույնը, գտավ այն, ապա ձգվեց. «Թու, հուու, ուուու, հուու: Բոլոր կենդանի արարածները ապրում են ի փառ կենդանի արարածների: Անգամ ձեր ցորենը կենդանի է»:

Քիչ առաջ թռչելով՝ նա հանդիպեց Չիջիկին:

- Դու այնպես հմուտ ես թռչում,- ասաց Փոքրիկ Բուն,- Եթե դու մեկ ձագից ավելին կրեիր, դա քեզ համար չափազանց ծանր կլիներ թռչելու համար:
- Հնարավոր է դու ճիշտ ես,- ասաց Չղջիկը:

Անցնելիս այն ծառի վրայով, ուր քնած էր Միրամարգը, Փոքրիկ Բուն, նա մտածեց.

- Նա պատկանում է կշկչացող թռչունների խմբին, ճիշտ հավերի պես նա էլ ցանկանում է մեկ ծառից ավելին ունենալ քնելու համար:

Մի փոքր էլ առաջ թռչելով՝ նա հանդիպեց Վայրի Կատվին, ով սպասելով բազմել էր մի լայն ճյուղի: Նրա աչքերը փայլեցին, երբ նա տեսավ Փոքրիկ Բունին:

- Դու այժմ իմաստուն ես, այնպես չէ՞,- Ֆշաց Կատուն:
- Ոչ այնքան, քանզի ես փոքր եմ և դեռ սովորում եմ,- ուրախ բվվաց Փոքրիկ Բուն:
- Ի դեպ ես նույնպես տեսել եմ կատվի, ով թույլ էր տալիս շոյել իրեն: Անգամ ձկները առվակում իրեն չէին գրավում:
- Ինչպիսի հանդգնություն,- փնչացրեց Վայրի Կատուն:
- Եթե բոլոր կենդանիները նման լինեին և նույնը զգային, արդյոք դա ձանձրալի չէր լինի,- հարցրեց Փոքրիկ Բուն,- միթե լավ չէ, որ Մեծ Գաղտնիքը, որ դու կոչում ես Մեծ Վայրի Կատու բազում տարբերակներ է առաջարկում:

Վայրի Կատուն լռելյայն հետևեց, թե ինչպես Փոքրիկ Բուն հեռացավ:

Վերջապես նա հասավ իր հարազատ օջախ, ի այց ծնողների: Փոքրիկ Բունի ծնողները ողջույն բվվացին:

- Մեծ Բունի - Ամենայն Արարչի դասերը քաղեցի՞ր, գավա՛կս:
- Այո՛,- խաղաղությամբ պատասխանեց Փոքրիկ Բուն,- և այսուհետ ես Ձեզ և աշխարհին ի լուր կպատմեմ դա:
- Պատմի՛ր բոլորին, գավա՛կս,- բվվաց Մայր Բուն:

Հայր Բուն ասաց.

- Ջավա՛կս, դա հեշտ չի լինի: Մարդիկ դժվար քեզ հավատան:

Փոքրիկ Բուն խոնարհեց գլուխը.

- Ես այնքան կդեգերեմ, մինչև գտնեմ նրան, ով կհավատա,- գոչեց նա:

ՎԵՐՁ